ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. №_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

Գ.ՀԱՍՐԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.25/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3–րդ հոդվածի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 4.5658հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխությունը 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գ.ՀԱՍՐԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.25/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 4.5658հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող 4.5658հա մակերեսով հողամասը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 20.07.2022թ. հ.Գ 20072022-01-0002 վկայականի համաձայն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը:

ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշաններով քննարկվող 4.5658հա մակերեսով հողամասը ներառված էր հատուկ նշանակության հողերում և բուֆերային գոտում, իսկ Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասը գտնվում է հատուկ նշանակության, ինչպես նաև գերեզմանների սանիտարապաշտպանիչ տարածքների գոտում:

Քննարկվող հողամասը ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 7-րդ գոտում և ընդգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող հողամասում համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա (ճարտարապետահատակագծային առաջադրանքներ՝ հ.հ. 18-07/2-6584-190, 50/2-14051-772, 50-05/2-20873-1118, 01/18-07/2-039-74, 01/18-07/2-34372-392, շինարարության թույլտվություններ՝ հ.հ. 18-22044-1132, 01/18-24210-838, ավարտական ակտեր՝ հ.հ. 01/19-9/24893-332, 01/19-18/8143-37) կառուցված են թվով 3 բազմաբնակարան շենքեր, ինչպես նաև այն, որ գործող օրենսդրության համաձայն բնակելի նշանակության շինությունները կարող են կառուցվել բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերում, ուստի անհրաժեշտություն է առաջացել քննարկվող հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերի՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց

նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի հ.1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից և տրվել է Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող 01-001-0315-0579 կադաստրային ծածկագրով 4.5658հա մակերեսով հատուկ նշանակության հողերից բնակավայրերի և բնակելի կառուցապատման հողերի փոխելու մասին 2025 թվականի փետրվարի 27-ի N.1/փ-74 դրական եզրակացությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ